

Պատասխաններ
11-12-րդ դասարաններ

1. 15.000 կվտ/ժամ
2. ա) հվ. լ. - 66° ,
բ) հվ. լ. - 72° :
3. Քաշմիր և Ջամնա
4. Ամազոն՝ Ուկայալի և Մարանիոն գետերի միացումից
Ամուր՝ Շիլկա և Արգուն գետերի միացումից
Օբ՝ Բիյա և Կատուն գետերի միացումից
Ենիսեյ՝ Բիյ Խեմ և Կա Խեմ գետերի միացումից:
5. Կոնգո – Բրազավիլ, Պարագվայ – Ասունսիոն ,
Կոնգոյի դեմ. Հանրապետ. – Կինշասա, Նիգեր- Նիամեյ ,
Գամբիա – Բանջուլ, Նիգերիա –Աբուջա ,
Ուրուգվայ – Մոնտեվիդեո, Սենեգալ – Դաքա :
6. Անապատները ձևավորվում են հիմնականում ցամաքների ներքին շրջաններում (խիստ ցամաքային կլիմայի պայմաններում) և մայրցամաքների արևմտյան ափերին (սառը ծովային հոսանքների ազդեցությամբ): Բոլոր գոտիների անապատներում էլ ամառը տաք է կամ շոգ, տեղումները՝ քիչ, օրական և տարեկան ջերմաստիճանային տատանումները՝ մեծ: Ակտիվ է ֆիզիկական հողմահարումը:
-Բարեխառն գոտիների անապատներում (Գոբի, Կարակում, Կզկում, Մեծ ավազան) ամառը շոգ է ($+28^\circ+29^\circ$), ձմեռը՝ ցուրտ ($-5^\circ-10^\circ$), տեղումները՝ քիչ ($100-200$ մմ):
-Մերձարևադարձային անապատներում (Սիրիական, Մոհավե, Դեշտե Լութ, Դեշտե Քեվիր և այլն) ամառը՝ շոգ է ($+29^\circ+32^\circ$), ձմեռը՝ սառը ($-0^\circ-5^\circ$), տեղումներն՝ ավելի քիչ ($50-150$ մմ):
-Արևադարձային անապատներում (Սահարա, Նամիբ, Կալահարի, Մեծ ավազային, Ատակամա և այլն) ձմեռը տաք է ($+5^\circ+15^\circ$), ամառը՝ շատ շոգ ($+30^\circ+35^\circ$), տեղումները՝ շատ քիչ ($10-100$ մմ):
7. Նորվեգիա - ջրաէներգետիկա - Համերֆեստ
Մալայզիա - հնեայի մշակություն - Իպոխ
Ռուանդա - սուրճի մշակություն - Կիգալի
Մոնղոլիա - ոչխարաբուծություն - Էրդենետ
Թուրքիա - այծաբուծություն - Կոնյա
Գաբոն - փայտատուտում - Լիբրևիլ
Բոլիվիա - անագի ձուլում - Փոթոսի
Զամբիա - պղնձաձուլություն - Նդոլա:
8. Որքան զարգացած է երկրի տնտեսությունը, այնքան բնակչությունն ապրում է բարեկեցիկ կյանքով և նրա զբաղվածությունը փոքր է արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում, քանի որ այդ ճյուղերն ավելի շատ մեքենայացված են և ավտոմատացված: Բանակչության մեծ մասը զբաղված է սպասարկման ոլորտում :
9. Էլբուրս - Դեմավենդ,
Պոնտոս - Քաջքար,
Ալթայ - Բելուխա,
Ուրալյան - Նարոդնայա:
10. 1. - սխալ է 4. - սխալ է
2. - ճիշտ է 5. - ճիշտ է
3. - սխալ է 6. - ճիշտ է
11. 4) .

Պատասխաններ
9-10-րդ դասարաններ

1. ա) Հյուսիսային բևեռային շրջագծից՝ 2664 կմ,
բ) հարավային արևադարձից՝ 7326 կմ:
2. ա) բնակչության բնական աճը 60.000 մարդ,
բ) բնակչության թիվը մեկ տարի հետո 4.068.000 մարդ:
3. Օբը- Իրտիշով, Միսիսիպին –Միսուրիով, Մուրեյը-Դառլինգով, Գանգեսը-Բրահմապուտրայով:
4. Բրազիլիա - Բրազիլիա (Ման Պաուլու)
Կանադա - Օտտավա (Մոնրեալ),
ԱՄՆ - Վաշինգտոն (Նյու Յորք),
Բոլիվիա - Սուքրե (Լա Պաս)
5. Ֆոլկլենդյան (Մավլինյան) կղզիներ:
6. Միջերկրածովյան կլիմայի մարզին բնորոշ են չոր ու շոգ ամառները և խոնավ ու մեղմ ձմեռները:
Խոնավ մերձարևադարձային կլիմայական մարզին բնորոշ են տաք ու խոնավ ամառները, մեղմ ու խոնավ ձմեռները :
7. Դաշնային պետությունը պետական կառուցվածքի ձև է՝ մի քանի պետությունների միավորում, պետական մեկ միասնական ամբողջության մեջ: Մտնելով դաշնային պետության մեջ դաշնակցած պետությունները պահպանում են իրենց ինքնուրույնությունը, իշխանության իրենց մարմինները և ձևավորվում են երկու ճանապարհով.
ա) դաշնային տարածքների միավորումով՝ ԱՄՆ, Գերմանիա, Արգենտինա, Ավստրիա, Բրազիլիա, ԱՄԷ, Կանադա և այլն:
բ) ազգային դաշնությունների միավորումով՝ Ռուսաստան, Նիգերիա, Հնդկաստան, Բելգիա և այլն:
8. Կալիֆոռնիա թերակղզու ափերով անցնում է Կալիֆոռնիական սառը հոսանքը, որը ցամաքի առափնիա մասի կլիման դարձնում է չոր ու սառը, լանդշաֆտը անապատ է ու կիսաանապատ:
Ֆլորիդա թերակղզու ափերով անցնում է Գոլֆստրիմ տաք հոսանքը, որը առափնյա մասի կլիման դարձնում է տաք ու խոնավ:
Խոնավ մերձարևադարձային կլիմայի պայմաններում անտառային լանդշաֆտ է:
9. Մեծ Ադի, Բալատոն. Օնեգա, Էլտոն, Արալ, Բսիկ-Կուլ, Բայկալ, Խանկա :
10. 1. - ճիշտ է 4. - ճիշտ է
2. - սխալ է 5. - ճիշտ է
3. - սխալ է 6. - սխալ է:
11. 2), 4), 5), 7):